ԱՅՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓԸ, ՈՐՈՆՔ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ Է ԲԱԶՄԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ, ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ԴՐԱՆՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓԸ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի _____ N__-Ն

ԱՅՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ, ՀԱՐԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓԸ, ՈՐՈՆՔ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ Է ԲԱԶՄԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ, ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ԴՐԱՆՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓԸ

Հիմք ընդունելով «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ մաքսատուրքերի, հարկերի ընդհանուր չափը, որոնց վճարման պարտավորության կատարումն ապահովվում է բազմակի ապահովմամբ, կարող է գերազանցել դրանով ներկայացվող ապահովման չափը հետևյալ դեպքերում և հետևյալ պայմանների ապահովման դեպքում՝

1) ապրանքների հայտարարատուին տրամադրված է երկրորդ տիպի վկայականով լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ.

2) ապրանքների հայտարարատուին տրամադրված է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ գործող օրինապահ հարկ վճարողի հավաստագիր՝ հայտարարատուի համար օրինապահ հարկ վճարողի հավաստագրի՝ նախկինում դադարեցված չլինելու պայմանով.

3) ապրանքների հայտարարատուին տրամադրված է Մաքսային կարգավորման մասին օրենքով սահմանված՝ գործող օրինապահության հավաստագիր՝ հայտարարատուի համար հավաստագրի՝ նախկինում դադարեցված չլինելու պայմանով։

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված դեպքերում մաքսատուրքի և հարկերի ընդհանուր գումարը կարող է գերազանցել այդպիսի պարտավորությունների ապահովման համար հայտարարատուի կողմից ներկայացված բազմակի ապահովման չափը՝ ոչ ավելի, քան հիսուն տոկոսով։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ